ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 84

«12» դեկտեմբերի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-108-0025-0024 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.13379 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻՑ 0.03379 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՐԹՈՒՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 2-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով Արթուր Հայրապետյանի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **որոշում է**

1.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի ուժով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Վահրամաբերդ գյուղի ԼԵՆ-ԳԷՍ թաղամասի, խճուղի 2, փողոց 4, տուն 10 հասցեում 08-108-0025-0024 կադաստրային ծածկագրով հողամասում կառուցված 362.08 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը՝ օժանդակ շինություններով և դրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.13379 հեկտար հողամասից 1000 քառակուսի մետր Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 329 որոշմամբ անհատույց տրամադրվել և համարվել է քաղաքացի Արթուր Ռաֆիկի Հայրապետյանի սեփականությունը, իսկ 0.03379 հեկտար շինության

պահպանման և սպասարկման համար ուղղակի վաճառքով վաճառել Արթուր Հայրապետյանին:

2. Բնակելի նշանակության շինության պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 1 քառակուսի մետր հողամասի կադաստրային արժեքը Վահրամաբերդ բնակավայրում սահմանված է 222 ՀՀ դրամ, շինության պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.03379 հեկտար մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է՝

338 քառակուսի մետր X 222 ՀՀ դրամ = 75000 /յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ,

0.03379 հեկտար հողամասի համար 75000 /յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքով վաճառել քաղաքացի Արթուր Ռաֆիկի Հայրապետյանին /անձնագիր AT 0370861, տրված 26.08.2019 թվական, 030-ի կողմից/

3.Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյանին

ա)Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված կարգով քաղաքացի Արթուր Ռաֆիկի Հայրապետյանի հետ կնքել սույն որոշման 2-րդ կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր:

բ)Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը:

4. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագիծը կցվում է որոշմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
ՄԱՆՈՒԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----------	----------	----------
ՌՈՒՍՏԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	-------- v	----------	----------
ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	----------	----------	----------
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝	---------- v	----------	----------

ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ --------- ---------- ---------- ----------

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝ --------- ---------- ---------- ----------

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝ --------- ---------- ---------- ----------

ԿԱՄՈ ՂԱՆԴԻԼՅԱՆ՝ --------- ---------- ---------- ----------

ՋԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝ --------- ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«12» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Մայիսյան